



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 02 >> Մայիս 2019թ.
ք. Արմավիր

N 27/49-2019

ՎԱՇԵ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԱՐՏԱՇԱՏ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 2 հավելվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2019 թվականի մայիսի 2-ի N 01//03867-2019 գրությունը, «Իմ քայլը հանուն Արարատի մարզի» ներդրումային-բիզնես ծրագրերի համաժողովին մասնակցելու նպատակով.

Կ ար գ ա դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Վահե Դավթյանին 2019 թվականի մայիսի 4-ին գործուղել քաղաք Արտաշատ «Արարատ Գրուպ» ջրերի գործարան «Իմ քայլը հանուն Արարատի մարզի» ներդրումային-բիզնես ծրագրերի համաժողովին մասնակցելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

X *S. Matevosyan*

VERIFIED OCSP 5/2/2019 16:21:23 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230